

Եւ հիմա ուլ Յակոբ, քեզ
ստեղծողը, ու, ուլ Իսրայէլ,
քեզ ձեռակերպող Տէրը այս-
պէս կ'ըսէ.
Մի վախմար, վասնզի ես
քեզ փրկեցի, քեզ քո-
անունովդ կանչեցի,
դուն իմս ես :
Եսայ. ԽԳ. 1.

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Մինչեւ ի մահ
հաւատարիմ եղիր,
ու քեզի կենաց պատկը
պիտի տամ :
Ձայն որ ունիք՝ պահեցէք
մինչեւ ես գամ :
Յայտ. Բ. 10. 25.

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Արտաստիման 1,50 շիլ. կամ 40 ամերկ. Սէնթ
RÉDACTEUR H. N. GHAZAROSSIAN, 29, Rue Fauchier — MARSEILLE (France)

ԹԻԻ 6

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1928

ԽՄԲԱԳՐԱԿՈՆ

ԱՆՊՏՈՒՂ ՀԱԻԱՏՔ

(Կարդա Յովն. Բ. 30-45)

Եկէ հաւատաս, Աստուծոյ փառքը
պիտի տեսնես. Յովն. ԺԱ. 40

Յիրաւի Պօղոս առաքեալ ամենայնաբար եւ ամէնէն ճիշդ ուսմանը տուած է հաւատքին:— Հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւնը եւ չեղեցած բաներուն ապացոյցն է (Եբր. ԺԱ. 1): Հաւատքի աչքերը իրաւունքի որոշ եւ անպատիւ կը տեսնեն քան մարգկային բնական աչքերը, որովհետեւ անոր տեսութեան առարկայ եղող եւ հասարակ աչքով չտեսնուող բաները շատ աւելի հաստատուն եւ անփոփոխ են, քան թէ մեր արտաքին հինգ զգայարաններէն ունէ մէկուն հնարաւոր ռեւէ եւրեւոյթ: Շատեր գիտեն զայս, եւ այդ փառաւոր փորձառութեան արդիւններն ալ կը վայելեն:

Մենք յաճախ կը զարմանանք Պօղոսի, Ճօրճ Միւլլըրի, Հըտտըն Թէյլըրի, Երէց Հէրի, Սատուի եւ ասոնց նմաններու հաւատքին վրայ եւ կը հարցնենք մեզի, ի՞նչպէս կ'ըլլայ որ շատերու հաւատքն ալ բոլորովին անպտուղ է: Կը հաւատան Աստուածային Երրորդութեան, Փրկչի մը գոյութեան, Յիսուսի խաչեւորութեան, կը հաւատան յաւիտեական մահու եւ կեանքի, կը հաւատան Աստուծոյ խօսքին եւ կը վախնան անոր դիմադրելէ, շատերէ ալ իբր քրիստոնեայ, բարեպաշտ հաւատացեալ կը նկատուին, այսու ամենայնիւ չունին այն զօրութիւնը, թարմութիւնն ու ուրախութիւնը, որ կենդանի հաւատքով կ'արտայայտուի եւ արտայայտուելու է: Տէրոջը գործին մէջ աշխատող մը յաճախ կը հանդիպի այսպիսի դէմքերու եւ երբեմն ալ կը վարանի յարմար խօսք մը գտնելու եւ անոնց հանդէպ յարմարապէս արտայայտուելու: Թերեւս այս տողերը ընթերցողներէն ոմանք այսպիսի պարագաներու հանդիպած են, թերեւս ուրիշներ ճիշդ այդ վիճակին մէջ կը գտնուին, կան ալ թերեւս որ այդ վիճակին մէջ գտնուելով հանդերձ մեծ փափաք մը ունին դուրս գալու եւ ոտնակոխելու պողաբեր հաւատքի դաշ-

տերը: Անցեալ օրերը խօսակցութեան մը մէջ երիտասարդ մը կ'ըսէր. «Ես քրիստոնեայ եմ, որովհետեւ Երրորդութեան անունով մ'կրտուած եմ»: Անոր դէմ խօսող ֆրանսացի տիկին մը ըսաւ. «Քրիստոնեայ ըլլալու համար մ'կրտութիւնը չբաւար, պէտք է հաւատալ Քրիստոսի Փրկչի մը ըլլալուն»: Ժամանակի ընթացքին տեսայ որ այս կինը ճշմարտութեան տեղեակ էր, բայց չունէր հաւատքի կեանքը, կեանք մը որ կրնար գինքը փրկութեան առաջնորդել: Ունէր միայն մտքի հաւատք մը, գիտութիւն մը, որ սորված էր Ս. գրական դասերուն մէջ, բայց երբեք իրականացուցած չէր իր կեանքին մէջ: Կը հաւատար Քրիստոսի եւ կը յուսար որ վերջին օրը Բարի Հովիւը, (ինչպէս ընել սովոր է) գինքն ալ պիտի ընդունէր, մահաւաղը որ ինքը լաւ կեանք մը կ'ապրէ: Այսպիսի բացարկական հաւատքէ մը հարկաւ պտուղ չենք կրնար ակնկալել: Կը ճանչնամ հայր մը, որ երկար տարիներ անտարբեր ապրելէ յետոյ, իր որդւոյն մահուան անկողնոյն վրայ ինքնաթեւադրիչ հաւատքով մը կ'աղօթէր իր որդւոյն բժշկութեան համար, եւ նոյն այդ հաւատքին մէջ հաստատ կը մնար, թէեւ շատերէ ազդարարուեցաւ իր ճամբուն անճիշդ ըլլալը: Այդ հաւատքը ո՛չ միայն անպտուղ էր, այլ փաստաւոր, վասնզի որդւոյն մահուանէն յետոյ առաջուան անտարբերութիւնը քրիստոնեական հաւատքի հակառակութեան փոխուեցաւ: Ուրիշ մը հիւանդութեան մատնուելուն պէս բոցավառ հաւատքով մը սկսաւ աղօթել որ Տէրը գթայ իրեն, բժշկէ գինքը: Ապաքինեցաւ, հաւատքն ալ հիւանդութեան հետ վերջ գտաւ, որովհետեւ հաւատքը միայն հիւանդութեանց եւ փորձութիւններու ընդդէմ պահածոյ մըն է, առողջ մարդը հաւատքի ի՞նչ պէտքութիւն ունի: Ունի նաեւ սա ինքնարդարացումը, թէ Բարին Աստուած իր ա-

զօթփին ձայնը լսեց եւ իր հաւատօքին համաձայն տուաւ իրեն: Այսպիսի պարագայական հաւատքները շինծու, թեւադրական, ինքնակամ եւ անպտուղ են:

Ինչպէս կ'ըլլայ այս:

Այսպիսիներ զգացական կեանքէն ներս կը մտնեն, կ'ուրախանան Քրիստոսով, թեթեւութիւն մը կը զգան, նոյնիսկ իրենց մեղքերուն թողութեան վստահութեան ՊէՍ փորձառութիւն մըն ալ կ'ունենան, բայց չեն հասնիր երբեք մեղքէ եւ աշխարհէ կատարեալ ազատութեան: Այդ նախնական զգացումները զգլխիչ ազդեցութիւն մը կը ձգեն իրենց վրայ, վասնզի անոնք երբեմն յորդահոս կ'ըլլան, այնպէս որ ենթական ինքզինքը երջանիկ սեպեցով ունէ ուրիշ բանի մը պէտք չզգար այլեւս: Բայց կ'անցնին օրեր, շաբաթներ, ինք անձամբ կը զարմանայ թէ նախկին տաք վիճակը տրդէն դացած է իրմէ ու նեղութիւն չունի, երբ որ չազօթեր. երբ Ս. Գրքի կանոնաւոր ընթերցում չունենայ, մասնաւոր անօթութիւն մը չզգար:

Այս պատճառաւ մեր Տէրը Յովհ. Ը. գլխուն Տաճարին մէջ եղած վիճաբանութենէն յետոյ Իրեն հաւատացողներուն ըսաւ. «Եթէ դուք իմ խօսքիս մէջ կեանք, ճշմարտապէս իմ սշակերտներս կ'ըլլաք եւ ճշմարտութիւնը պիտի գիտնաք, ու այն ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» (Յովհ. Ը. 31-33): Աստուծոյ խօսքին մէջ կեցողը միայն ժամանակ կ'ունենայ խորհելու, տրամաբանելու, լուսաբանուելու, որպէսզի փրկութեան եւ Քրիստոսի կատարեալ աշակերտ մը ըլլալու վստահութեան հասնի:

Հաւատքը Աստուծոյ խօսքէն կը կերակրուի, առանց ասոր հաւատքը աննունդ մնալով կը նիհարանայ, կը տկարանայ, կը նուաղի, կը մեռնի: Հաւատքը կերակրողը զայն զօրացնողը, մխիթարողը, առաջնորդողը, լուսաւորողը Ս. Հոգին է: Առանց Ս. Հոգիին ստեղծուած հաւատքը թեւադրական, սատանայական եւ կործանարար է:

Մեր Տէրը մէկ կողմէն անպտուղ հաւատքի անցեալ խորիւրուն շէնքերը կը փլցնէ եւ երբեք չհանդուրժեր որ անոնք դեռ կանգուն մնան: Զայս կը տեսնենք յոտակ կերպով Յովհ. Ը. 34-45 համարներուն մէջ: Մարկոս 9. 6ի մէջ կը տեսնենք որ անոնց այս անհաւատութեան վիճակին վրայ կը զարմանար եւ անոնց առջեւ բնաւ հրաշք մը չէր ընէր, ո՛չ թէ անոր համար որ իր հրաշքները կախում ունէին անոնց հաւատքէն, այլ որովհետեւ Տէրը առանց մասնաւոր նպատակի մը հրաշք չէր գործեր: Քռազդիւի, Կափառնայումի, Երուսաղէմի ալ երեսին կը զարնէ իրենց անհաւատութիւնը եւ անոնց կը յայտնէ թէ գիրը չէ կենդանի ընողը Փարիսեցիներու անպտուղ հաւատքի հիմը ինչպէս կը ցնցէ Մատթ. ԻԳ. գլխուն մէջ: Անոր նպատակն է մարդիկ հաստատուն պտղատու հաւատքի վրայ կեցնել եւ ո՛չ թէ աւելորդապաշտական կամ աւանդական երեքուն երեւոյթներու վրայ, որոնք մարդկային են, մասհացու են: Անոր նպատակն է փոթորիկներու դիմացող եւ Աստուծոյ հաճոյ հաւատոյ շէնք մը պատրաստել ամէն մէկուն մէջ. այս պատճառաւ ստիպուած է երբեմն խորտակել, երբեմն կարել, խորուն-

կէն կտրել, ցաւցնել, շա՛տ ցաւցնել, որպէսզի անոր հետեւող ուրախութիւնը տեւական ըլլայ:

Միւս կողմէն երբ անիկա կը տեսնէ պլպլացող հաւատք մը, անմիջապէս կը քաջալերէ զայն, դուն կը հաւատաս Աստուծոյ Որդւոյն (Յովհ. Թ. 35): Եթէ կարող ես հաւատաւու, ամէն բան կարելի է... (Մարկ. Թ. 22): Մի՛ վախ՛ար, միայն հաւատա՛ (Մարկ. 2. 36): Կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանը ձեզի ընել (Մատթ. Թ. 28): Եթէ հաւատաս Աստուծոյ փառքը պիտի տեսնես. (Յովհ. ԺԱ. 40): Մեր Տէրը այս հագածութիւնը սքանչելի կերպով կը ցոլանայ Մատթ. ԺԵ. 21-28ի մէջ: Նախ երբեք չպատասխանիր, իբր թէ կարեւորութիւն տուած չըլլար, ապա երբ բերանը կը բռնայ, կնոջ ահնկալութիւնները կը խորտակէ ըսելով. ես ուրիշ մը չըրկուեցայ բայց միայն Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն. վերջապէս անոր խկական դերքը ցոյց տալով՝ ժամանակ կը վատակի անոր հաւատքը խորունկցնելու՝ արմատացընելու, մինչեւ որ հասնէ մեծ հաւատք կոչուելու աստիճանին, որպէսզի նա կրնար ապրիլ այդ հաւատքով դեռ երկար ատեններ:

Տէրը Դամասկոսի մէջ պլտիկ աղջկան մը խօսքին միջոցաւ Ասորի Նէեմանի սիրտը լուսաւորող հաւատքը աւելի հաստատել կ'ուզէ, որպէսզի յաւիտեականութեան համար բաւէ: Եղիսէ կրնար անոր փափաքին համաձայն իր ձեռքով անոր բորոտ մարմնոյն դաչիլ եւ բժշկել զայն, այսու ամենայնիւ Նէեման Յորդանանու գետին մէջ եօթն անգամ լուացուելու պէտքն ունէր: Նէեմանի համար պէտք էր, Աստուծոյ խօսքին մէջ կենալ, սպասել, խոկալ, ըմբռնել, ընդունիլ, բժշկուել եւ Աստուծոյ փառք տալ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ.— Զըլլայ որ Նէեմանի պէս հաւատքով մինչեւ Եղիսէի քով երթաս. եւ քու խորհածը չեղածին պէս ետ վերադառնալ ուզես: Արդիւնուոր հաջողքը երբեք տեսնելի բաներով չհաշուեր (Յուք. ԺԹ. 23-27, Ամբ. Գ. 17-19, Դուկ. Ե. 36): Աբրահամ հաւատաց, ելաւ ու գնաց: Անապատին մէջ դժուարաւ քաղեց, սատանային թեւեփոնները անպակաս եղան երկար տարիներու ընթացքին, բայց անիկա հաւատաց եւ այս իրեն արդարութիւն սեպուեցաւ:

Տէրը քեզի ալ կ'ըսէ. «Ահա սկսայ տալ, սկսէ տիրել» (Բ. Օրին. Բ. 31): Հաւատքը տիրել է: Տիրելու հետ միշտ զուգընթաց կ'երթան կռիւներ, հակադարձակումներ, սրաշարման ենթարկումներ, բայց յաղթութիւնը ապահովուած է Յիսուս Քրիստոսով:

Հաւատքի առաջին հանգրուանը փրկութիւնն է (Գործ. ԺԶ. 31) ուրկէ հաւատացեալ մը կը սկսի աւելի բաներ, նորանոր դաշտեր իւրացնել, մինչեւ հասնի վերջին հանգրուանին, ստացուածքին փրկութեան (Բ. Տիմ. Գ. 14-15) որ ասին հաւատքը տեսութիւն ըլլալով՝ այլեւս գոյութենէ կը դադրի: Առաջին հանգրուանը չհասնող կամ սխալ հանգրուան մը գտնող մէկը երբեք չպիտի կրնայ հասնիլ վերջինին, որքան ալ ջանաւոր ըլլայ. (Բ. Տիմ. Գ. 7-8):

Արդ, մտքիդ մէջըը գտնուողած (Ա. Պետ. Ա. 13) վարժեցուր զինքդ այս հաւատքի կեանքին մէջ եւ Տէրը իր գործը կատարեալ պիտի ընէ քու մէջդ եւ քեզմով :
ՄԻԱՅՆ ՀԱՌՏԱ՝ ՈՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ
ՊԻՏԻ ՏԵՄԵՆՍ :

ԱՆՈՐ ԱՆՈՒՆԸ ՍՔԱՆՁԵԼԻ Է

Ու եղիսէ անոր ըսաւ. «Գնա դուրսէն քու բոլոր դրացիներէդ քեզի պարսպ ամաններ ուզէ ու քիչ մի՛ ուզիր: Եւ տունդ մտիր, քու վրայէդ ու քու որդւոցդ վրայէն դուռը գոցէ, եւ քու խղճան բոլոր ամաններուն մէջը պարսպէ, ու լեցուածը վերցուր: Եւ անկա անոր քովէն գնաց, ու իր վրայէն ու իր որդւոցը վրայէն դուռը գոցեց. անոնք անոր կը մտնեցնէին, ու անկա կը լեցնէր: Ու երբոր ան ամանները լեցուեցան՝ իր որդւոյն ըսաւ, ինծի ուրիշ ամաններ մտնեցուր. ու անկա ըսաւ. անոր, ուրիշ աման չկայ»: ան ատենը իւրը կայնեցաւ:

Գ. Թագ. Գ. 3-6:

Հրաշալի պատմութիւն մը: Մէկ իւրի կուժ մը կը լեցնէ շատ պարսպ ամաններ: Այո՛, մեր Աստուածը զիտէ եւ կարող է քիչը շատցնել: Նոյն բանը պատահեցաւ Սարեփթացի կնոջը, որուն քով եկաւ Եղիան. երեք ու կէս տարի կարասէն ալիւրը չհատաւ, ու կուժէն իւրը չպակսեցաւ: Ասանկ եղաւ նաեւ Յիսուսի 5000ը կերակրելու միջոցին եւ այսպէս է տակաւին այսօր ալ: Սխալ է երբ մենք կ'ըսենք թէ ներկա իս հրաշք չգործուիր. այսօր նոյնքան դարմանալի հրաշքներ կ'ըլլան որքան հին ատենները: Երէջ Գրումմըն իր գրքին մէջ Եղիսէ մարգարէի օրերուն մէջ պատահածին նման դարմանալի պատմութիւն մը կը պատմէ, որուն ինք ահանաւան եղած է: Կաղանդի պատմութիւն մը:

Որբեւարի կին մը հիւանդ պառկած էր անկողինին մէջ. տանը մէջ ոեւէ բան չէր գտնուեր եւ պզտիկները անօթի սենեակին մէկ անկիւնը կեցած էին: Երէցը հարցուց անոր. «Ի՞նչ ունիս տանդ մէջ»: «Պարսպ ամաններէ գատ ուրիշ ոչինչ»: «Հիմա զանոնք մէկտեղ հաւաքէ եւ քու դրացիներէդ ուրիշ ամաններ ալ ուզէ»: Պզտիկները անմիջապէս վազելով իրենց դրացիներէն պարսպ տակառներ եւ ամաններ բերին: Եւ ահա՛ դուռը բացուեցաւ ու մէկը ներս մտնելով՝ նուէր մը դրաւ սեղանին վրալ եւ գնաց: Յետոյ ուրիշներ եկան հաց, միս եւ ուրիշ ուտելիքներ բերելով: Ամանները լեցուեցան, բայց բերողներուն վերջը չեկաւ: Մարգրիկ բերին նաեւ ձերմակեղէն, հազուստ ու պզտիկներուն համար խաղալիքներ: Եւ այս ամէնը բերին յօժար սրտով եւ ուրախութեամբ, մխիթարելով խեղճ որբեւարի կինը: Կարծես եկտրները խորհրդակցաբար այս գործը ըրած ըլլային, մինչդեռ մէկգմէկէ բնաւ լուր չունէին:

Մինչ այսպէս սեղանը ամբողջ ծածկուեցաւ, խեղճ կինը անկողնոյն մէջ պառկած էր ուրախութենէն արտասուելով եւ փառք տալով Աստուծոյ: Օ՛հ, եթէ Աստուած այսպիսի հրաշքներ կրնայ ընել, կրնայ ուրեմն զիս ալ բժշկել. հազիւ այս խօսքը արտասանած էր, կարծես անմիջապէս փոփոխութիւն մը զգաց իր մարմնոյն մէջ. ան ելաւ անկողնէն եւ իր պզտիկներուն հետ միասին ծունկի գալով՝ փառք տուաւ Աստուծոյ որ այս մեծ նեղութեան մէջ իրենց օգնութեան հասաւ: Հետեւեալ օրը բոլորովին ապաքինած, անոնց հետ ուրախ եւ զուարթ եկեղեցի գնաց եւ այդ Կաղանդի տօնը, իրապէս օրհնեալ տօն մը եղաւ անոր համար:

Բայց թերեւս հիմա պիտի ըսես. Երէջ Գրումմըն շատոնց մեռած է եւ ոչ ոք կրնայ ստուգել թէ իրօք ասանկ բան մը եղած է. անոր համար եւ կ'ուզեմ դարձեալ պատմութիւն մը պատմել, պատմութիւն մը որ անձամբ տեսած եմ իմ կեանքիս մէջ:

1900 ին իմ կինս ծանր հիւանդացաւ. հիւանդութիւնը երկար տեւեց ու շատ դրամ ծախսուեցաւ: Հիւանդը կը տառապէր սրտի բարախումով եւ այս վտանգաւոր հիւանդութենէն ազատելու միակ դարմանն էր շամբանիա գործածել. ասիկա շատ սուղի կը նստէր մեր վրայ: Օր մը Երկուշաբթի կէսօրէ մը վերջ այցելու մը եկաւ. հարուստ ազարակապան մըն էր, որ արդէն հիմա վերին հայրենիքը գացած է: Բաւական նստելէն եւ աստ անդ նայելէն վերջ 60 մարք դրաւ սեղանին վրայ: Եւ չուզեց ընդունիլ, վասնզի ինչպէս զիտէք, շատ դժուար է ասանկ նստէր մը ընդունիլ: Բայց անիկա ստիպեց զիս ընդունիլ եւ ըսաւ որ այս մարքերը մասնաւոր պատմութիւն մը ունին, քեզի պատմեմ:— Երէկ ձեզի հետ մէկտեղ եկեղեցին էի. երբ տուն գացի, ամբողջ գիշերը չկրցի քնանալ. Ձեր տօնոյն դէմքը միշտ աչքիս առջեւն էր թէ ինչպէս կեցած էիք ամպիոնին վրայ եւ ձայն մը ըսաւ ինծի. Պատուելի Մ. նեղութեան մէջ է, գնա եւ օգնէ անոր: Ուստի եւ խորհեցայ անձամբ գալ եւ դրամը տալ Ձեզ: Ամբողջ գիշերը այդ խնդիրը զիս զբաղեցուց. ինծի համար խիստ ծանր կուգար անձամբ այս օգնութիւնը բերել Ձեզ: Բայց մինչ այս առաւօտ առջի գիշերուան տքունութեանս պատճառաւ թմրած նստած էի սենեակս, ահա մեր ուսուցիչը եկաւ եւ ըսաւ. «Յրից, ի՞նչպէս ես, շատ յոգնած կ'երեւիս»: «Այո՛, շատ յոգնած եմ», պատասխանեցի, ամբողջ գիշերը բնաւ չեմ քնացած»: «Ի՞նչ կ'ըսես Յրից, ես ալ չկրցի քնանալ, բոլոր գիշերը Պատուելի Մ. ին վրայ խորհեցայ»: «Իրա՞ւ, ես ալ անով զբաղեցայ, շարունակ ձայն մը կը լսէի որ կ'ըսէր, պէտք է երթաս եւ օգնես անոր»: Այսպէ՛ս, ու տակաւին հո՞ս ես, եւ անմիջապէս

սեղանին վրայ 20 մարքնոց մը դնելով ըսաւ, այս ալ առ եւ քուկինիդ հետ մէկտեղ տար առանց ժամանակ կորսնցնելու» :

Ահաւասիկ խնդիրը այսպէս եղաւ, եւ ահա ես հոս եմ Ձեր քով. ուրեմն պէտք է անպայման ընդունիք, որպէսզի ես կարենամ հանգիստ խղճով քնանալ: «Քանի որ այդպէս է, դրամը սիրով կ'ընդունիմ» ըսի, խոստովանելով որ զրպանս այլեւս դրամ չունէի ծախսելիք: Ասիկա իրապէս զարմանալի օգնութիւն մըն էր նեղութեան մէջ եղողին համար. բայց դեռ այս չէր բոլորը: Նամակատուիին մէջ նամակ մը ձգուած էր, քացի եւ 50 մարքէն զատ ոչինչ գտայ մէջը: Դիչ ետքը քանի մը պարոններ եկան քաղաքէն եւ պահարան մը բերին. երբ քացի, հարիւրաւոր մարքերով լեցուն էր: Ետքը կառք մը կեցաւ դրան առջեւ. գետնախնձորով, բանջարեղէններով եւ ամէն կարգի ուտելիքներով բեռնաւորուած՝ ամբողջ ձմեռուան համար: Այսպէս հրաշալի միջոցներով՝ ուտեստեղէնէ զատ բաւականաչափ մեծ գումար մըն ալ ունեցայ, հիւանդին պէտքերը լիովին հոգալէ տակաւին շատ շատ աւելին: Օ՛հ, այն ատեն հասկցայ որ մեր Աստուածը այսօր նոյնն է ինչպէս Եղիսէի ժամանակը եւ որ այսօր ալ նոյնպէս հրաշքներ կը գործէ, ինչպէս Եղիայի եւ Եղիսէի օրերուն:

Սիրելի բարեկամս, եթէ դուն քու կեանքիդ մէջ տեսած չես Աստուծոյ հրաշքները, պատճառը այն է որ մանկական վատահոլութիւն ունեցած չես անոր վրայ: Սաղմոսերգուն կ'ըսէ, Տղայ էի ու ծերացայ, բայց արդարը անտես եղած չի տեսայ, կամ անոր զաւակը հաց մուրացող: Ես կը ստորագրեմ ասիկա, հապա դո՛ւն: Օ՛հ, վատահէքու Աստուծոյդ, թերեւս դուն ալ նեղ վիճակի մը մէջ կը գտնուիս եւ ասդին անդին կը դառնաս օգնութիւն գտնելու համար: Բայց ո՛չ, այդ ճամբադ սխալ է, փոխանակ այս ու այն կողմ երթալու եւ պատմելու, ուղղակի Տէրովդ գնա, անոր պատմէ ցաւերդ, անոր՝ որ ամպերուն եւ հովերուն ճամբայ կուտայ, քեզի ալ պիտի ցուցնէ քու երթալու ճամբադ: Խորհէ անգամ մը, Աստուած որ ամբողջ աշխարհը կը կառավարէ եւ աստղերուն շրջան ընել կուտայ, քեզի ալ պիտի չառաջնորդէ՞ եւ պիտի չհողա՞յ քեզ: Որքան ալ ծանր եւ զրգուար պարագաներ ունենաս, անոր համար դժուար չէ, դուն միայն հաւատքով վատահէ անոր եւ աչքերդ վեր վերցուր, եւ այն ատեն փորձառար պիտի գիտնաս թէ երբ թախծութիւնը եւ անյուսութիւնը քեզ պատեն, անոր օգնութեան զօրաւոր աջ բազուկը պատրաստ է քեզ առաջնորդելու ցարեկը ամպի սիւնով եւ զիշերը կրակի սիւնով:

Թարգ. Գերմ.

Ե. ՏԷՄԻՐՃԵԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ ՍԲ. ԳԻՐԲԸ ԱՄԵՆԱՕԳՏԱԿԱՐ ԿԵՐՊՈՎ Ս Ե Ր Տ Ե Լ Ո Ւ

Բ. Ե. ԹՈՐՐԻ

(Շար. 5 Թիւն եւ. վերջ)

8. ԱՂՕԹԱՍԻՐՈՒԹԻՒՆ.— Ահա վերջին պայմանը Սուրբ գիրքը ամենաօգտակար կերպով սերտելու: Աղօթասիրութիւն: Սաղմոսերգուն կ'աղօթէ «Բաց իմ աչքերս որ քու օրէնքէդ հրաշքներ տեսնեմ» Սաղմ. ՃԺԺ. 18:

Ամէն անհատ, եթէ կը փափաքի իր ուսումնասիրութիւնէն ամենամեծ օգուտը քաղել, պէտք է Աստուծոյ խօսքը բանալէ առաջ այս կամ ասոր նման աղօթք մը ընէ:

Սբ. գրքի զաղտնիքներու զանաւորանը բանալու կարեւորագոյն բանալիներէն մէկն է Աղօթքը: Շատ մը անըմբռնելի կէտեր, եւ շատ մը թնճուկներ զիւրութեամբ կը քակուին ու կը պարզուին մեր աչքերուն առջեւ. եւ այն շատ մը զեղեցկութիւնները, որոնք բնական աչքերով զիտոգնեցնէ ծածկուած են, մենք աղօթքի շնորհիւ զանոնք ամէնքն ալ կրնանք անձնապէս գիտել ու վայելել:

Ի՛նչ փառաւոր լոյս կը ծագի, երբ մենք մեզի ծանօթ համարի մը վրայ աղօթք ընելէ յետոյ կը խորհրդածենք: Ես կը հաւատամ որ երբ մէկը Սբ. գիրքը ծունկերուն վրայ դրած, խոնարհարար կը սերտէ զայն եւ այդ կերպով կ'աւարտէ, անկէ յետոյ Սբ. գիրքը նոր նշանակութեամբ նոր գիրք մը կը դառնայ իրեն համար:

Մէկը պէտք չէ բանայ Սբ. գիրքը առանց կանխաւ՝ աղօթքով մը, իր սիրտը Աստուծոյ յանձնելու, եւ խնդրելու որ Ան, Իր Սբ. Հոգոյն լոյսովը, անոր պարունակութեանց խորունկ զաղտնիքները հափկցնէ իրեն:

Հազուադիւս առանձնաշնորհում մըն է որ մէկը գիրք մը սերտէ բուն հեղինակին առաջնորդութեամբ, սակայն մենք բոլորս ալ Սուրբ գիրքը սերտելու պարագային այս մեծ առանձնաշնորհումը ունինք:

Երբ մէկը իր ուսումնասիրութեան միջոցին կ'ունենայ դժուարութիւն հասկնալու կամ բացատրելու, փոխանակ այդ թերութեան տեղ տալու կամ բարեկամի մը զաղափարին կամ մեկնութեան դիմելու, թող ուղղակի Աստուծոյ տանի եւ բացատրութիւնը Անկէ խնդրէ, վատահելով այն խոստման որ կ'ըսէ՝ «Եթէ ձեզմէ մէկը իմաստութեան պակասած ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ, որ ամենուն առատապէս կուտայ ու չի նախատեր եւ անոր պիտի տրուի, միայն թէ հաւատքով թող խնդրէ, ու չհրկմտի»:

Հիանալի եւ սքանչելի է, երբ ոեւէ մէկը կը

տեսնէ, թէ ինչպէս ամենախրթին հատուածները կը լուսաբանուին ու կը պայծառանան իր առջեւ բռն իսկ իր այդ կերպով մօտենալուն պատճառաւ :

Հէրբի Մօրէհաուս Սբ. գրոց ամենանշանաւոր մատենագիրներէն մին այս վարժութիւնը որդեգրած էր եւ կ'ըսէր. — «Ամէն անգամ որ անհասկնալի նիւթի մը կը հանդիպէի, սոյն նիւթին շուրջ բոլոր Սբ. գիրքը կը պրպտէի, որպէսզի կրնայի որոշ տեսութիւն մը ունենալ. յետոյ զայն աղօթքով Աստուծոյ կը տանէի, ու չեղաւ պարագայ մը որ այս կերպին տեղ չտար» :

Գրութեանս հեղինակն ալ ունեցած է նման փորձառութիւններ :

Տարիներ առաջ, բարեկամի մը հետ պտոյտի ելած էի Ֆրանքօնեան Զուիցերլանտի մէջ նշանաւոր քարանձաւ մը այցելելու նպատակաւ : Քաղաքին նամակաբաշխը մեզ կեցնելով հարցուց թէ՛ չէ՞ք ուզեր տեսնել հետաքրքրական եւ հազուապիւտ քարայր մը, առանց երկար յոգնութեան : Պատասխանեցինք թէ՛ այո՛, անշուշտ կը փափաքինք : Մարդը մեզ առաջնորդեց մացառուտ անտառէ մը եւ տարաւ ճիշդ քարայրին բերանը, ներս մտանք. քարայրը բոլորովին մութ էր : Մեր առաջնորդը սկսաւ եռանդով պատմել անոր գեղեցկութեան մասին, պատկերացուց նաեւ զոհասեղանին շքեղութիւնը եւ ուխտաւորներու հոծ բազմութիւնը : Սակայն մենք ոչինչ կրցանք հասկնալ : Յանկարծ մեր առաջնորդը ազդարարեց թէ շատ զգուշաւոր ըլլալու ենք, որովհետեւ մօտ էինք այն ահաւոր անդունդին, որուն յատակը տակաւին գտնուած չէր : Սոսկումը պաշարեց զմեզ, առաջին գլորուողը եւ զոհ մենք պիտի ըլլայինք : Հոն հաճելի եւ հրապուրիչ եւ ոչ մէկ բան կ'երեւար : Մէկ ակնթարթի մէջ երեւոյթները փոխուեցան անմիջապէս մաքնիսական կատարը լուսաւորուեցաւ : Դիտելու ատեն տեսանք թէ վերը առաստաղին վրայ եղող պտկաքարեր (քարայրներու մէջ շուրի կաթիլներէ գոյացած քար) կարծես վար կը թափին : Կար նաեւ բնական շինուածքով զոհասեղան մը, որուն երեւոյթը հին երկրագոյններու ճարտարութեան յատուկ էր : Այդ լուսաւոր գեղեցկութեան մէջ տարօրինակ հմայք մը կը ճառագայթէր :

Յաճախ խորհած եմ թէ Աստուածաշունչի շատ մը տողերը վերոյիշեալին նման են : Շատ ուրիշներ կը պատմեն, կը գովաբանեն անոնց գեղեցկութիւնը, բայց զոնք ոչինչ կը տեսնեն, ընդհակառակը անոնք քեզի շատ մութ, խառնակ, վտանգաւոր եւ արգիլուած կ'երեւին, սակայն երբ մէյ մը աղօթելէ՞ք յետոյ Աստուծոյ մաքնիսական փառաւոր լոյսը անոնց վրայ ցոլա-

նայ մէկ ակնթարթի մէջ ո՛րքան փոխուած պիտի գտնես զանոնք : Պիտի տեսնես հիանալի եւ անպատմելի հրաշալիքները, որոնց մասին մէկ խօսք իսկ արտայայտելու անկարող պիտի գտնես ինքզինքդ : Միմիայն Աստուծոյ այդ լուսաբաշխին առջեւ կեցողը եւ անոր քաղցրութիւնը վայելողը կրնայ գնահատել անոր արժէքը :

Ով որ ճշմարտապէս Աստուծոյ խօսքը սերտել կը սիրէ, պէտք է աղօթքի շատ ժամանակ եւ կարեւորութիւն տայ : Աղօթքը համալսարանի մը ուսուցումէն շատ աւելի բաց ու որոշ ուղեցոյց մըն է Ս. Գրքի սերտողութեան պարագային :

Կը վկայեմ թէ այս իմ ամենալաւ դասս սորված եմ Գերման համալսարանի մը մէջ, հեզ, բարի եւ շնորհալի բրօֆէսէօրի մը քով, ուր ուսումս ստանալու մենաշնորհն ունեցած եմ : Այս բրօֆէսէօրին շնորհքին եւ համբաւին զաղտնիքը կը կայանար ասոր մէջ որ ան՝

«Իր պաշտօնէութեան բոլոր շրջանին Ս. Գրոց աշխատասիրութիւնները՝ եւ ընթացիկ ուսումնասիրութիւնները ծնկան վրայ գալով կ'ընէր» :

Թարգ. Անգլ.

Մ. ԱՅՆԱՃԵԱՆ

ԹՈՒՐԿԵՐԷՆ ՄԱՍ

ԵԱԼԸՆԸԶ ԹԱՐԻԳ ԳՈՒԶՈՒ ՏԸՐ

Խուրճ. 12 պապ

Մըսր իւզէրինէ օն իքի պէլաւար կէլտիւէր, լաքին պոնլարըն ճիւմէսիտէ էսարէթտէ օլան Խարայէլ զավմընա եօլ աշամատըլար : Անճագ Գուզու կէլտիլիտէ, անլէր իչէրտէ գուզուլու եէտիքլէրինտէ վէ խարիճտէ զափուլարըն սէօյէլէրինէ զանը սիւրտիւքլէրինտէ, օլ զէման զավմ իչիւն եօլ աչըլտը : Գուզու Խարայէլին գուլիպէլէրինէ կիրտիլինտէ տիր քի անլէր չըզապիլտիլէր : Զանն էթմէ քի սէնին խասթալըզըն, կիւնահլարընը իգրար էթմէքլիլին վէ տէրունի հիւքմէքտէն կէչմէքլիլին սէնի էսարէթինտէն գուրթուրապիլիլէր : Պու ճիւմէ շէյլէր անճագ հազըրլըզ տըրլար, անլէր գուզուլա եօլ աշարլար : Խէլաս էտէն, չէօզէն շէյ հիւքմ տէյիլ իւլա ինայէթ տիր : Տանիլին աթէշ ֆուրուռունտա օլան իւլ տօսթլարընըն պաղլարընը չէօզէն, աթէշ տէյիլ իլլա անլէր իլէ աթէշ իչիւնտէ պուլունան Տէօլտ իւն ճիւլ զաթ, իպն իւլ ինսան իտի : Զիւնքի անճագ անըն ճիւմէ պէշէր իւզէրինէ հիւքիւմէթի վար. Յովհ. 17. 2 : Սէնտէ տահա թէնէ տիտ, ֆանի վէ էօլիւմ բախհաթը թաշըյան շէյլէր վա՛ր մը : Պու շէյլէրի սէնտէն գալտըրըպ անլէրին եէրինէ սաւա էպէտի հայաթ

վերմէյէ Անըն գուտրէթի վար տըր: Սէնին սիյը-
րէթինտէ հալա չէօգիւլմէմիշ վէ դըրըլմամըշ
շէյլէր վար մը: Գուզու չէօգիւլմէմիշ պաղլարը
չէօգէպիլիւր վէ դըրըլմամըշ պաղլարը գըրապի-
լիւր: Վահի 3. 1—5: Էօմրիւմիւլտէ Էօլէ շէյլէր
օլապիլիւր քի մէօհրլէնմիշ տիւյիւմլէրէ պէնդէր-
լէր, պիզ անլէրի չէօգմէյէ չալըշտըզ վէ պաշպա-
լարա տախի չէօգմէյէրի իչիւն րէնա էթտիք վէ
իշթէ հալա պու կիւնէ գատար չէօգիւլմէմիշ
տուրույօրլար: Լաքին կէլինիզ Գուզույա կիտէ-
լիւմ, չիւն էվվէ վէ Ախըր 0 տըր. Վահի 4. 17:
Սէմատա, գէմիւնտէ վէ գէմին ալթընտա հիչ պիւր
քիմսէնին եափամատըղընը 0 եափապիլիւր: Իս-
թիյարլար Իսրայէլ օղուլլարընըն եիւքիւնին
թախֆիֆ էտիւմէսի իչիւլ Փարաւտնա պիհուտէ-
լէ միւրաճաթ էթտիլէր վէ Մոփսէր պիհուտէյէ
անլէրին խէլասը իչիւն չալըշտը վէ ճէսարէթ-
տէն տիւշէրէք Ալլահա շէօյլէ ֆէրեատ էթտի
«Սէն գափմընը պիւր վէճհլէ խէլաս էթմէտին»
Խուրճ 3. 23: 0 գէման Եհովա տէտի «Շիմտի
գափմըմա նէ եափամաղըմը կէօրէճէքսին, Խուրճ
6. 1: Վէ Եհովա Գուզու իլէ կէլիւլ խէլասը Գու-
զուտա իճրա էյլէտի: Սէն իսթիյարլարլար,
թէճըիւպէքեարլար, Մոփսէն վէ Ահարոնլար եա-
նի իրսալ օլունմուշլար վասիթասըյլէ խէլաս
պուլամատըն մը: ճէսարէթտէն տիւշմէ: Գու-
զուտա սէնին իչիւն պիւր հօլ վար: Անըն գանը
հէր կիւնահտան վէ հաթթա գանընա կէչէրէք
սէնի սէիւր էթմիշ օլան ճիւմլէ թապիաթլարըն-
տան տախի չէօգէպիլիւր: 0 պիզիւմ թէնիմիզ վէ
գանըմըզ իչիւնտէն տախի պիւր հօլ աչտը վէ խէ-
լաս իճրա էյլէտի: Իպր. 2. 14, 15 այլթլէրտէ
շէօյլէ կէօրիւյօրուզ. 0 իւզէրինէ թէն վէ գան
ալտը թաքի թէն վէ գան վասիթասըյլէ պիզէ
ճէֆա վէրէն վէ էսարէթտէ սաղլայանըն գուվվէ-
թինի իպթալ էյլէյէ, պու խուսուտա տախի 0
պիզէ հօլ աչտը:

Գուզու հալընըզ հէր ճինս պաղլարտան չէօ-
գէն պիւր թարիզ տէյիլ տիւր իլլա 0 պիզի
քէնտի քէնտիմիզ տէն տախի չըզա-
րան թարիզ տիւր: Անըն արտընճա ալընան
հէր ատըմ այնի վաղթտա պիզի պիզտէն չըզա-
րան պիւր ատըմ օլուր: Պիզիւմ վարըղըմըզտա
հէր զըտտիյէթ վէ տիւզէնսիզլիք Գուզունուն իզ-
լէրինտէ եիւրիւյէրէք տիւզէլիւր, թա Անըն իսմի
վէ Ալլահընըն իսմի պիզիւմ ալըմըզա հաղըլըն-
ճայատէք: Նասըլ քի Պօղոս րէսուլ Բ. Գօր. 3.
18 տէ տէյօր պիզ ճէլալտէն ճէլալէ անըն սու-
րէթինէ թէպտիլ օլունուրուզ: Նասըլ թէպտիլ
օլունուրուզ: Բապպըն ճէլալինէ, Գուզունուն ճէ-
լալինէ սէյր էտէրէք վէ ամէլի սուրէթտէ ալապ-
լարըմըզա անըն հօլունա կիւրէրէք: Վէ անըն
հօլու քէնտի քէնտինի գայ էթմէք հօլու տուր:
Պիզ Ֆիլ. 2, 7 տէ օղույօրուզ «0 քէնտինի

թախիլիւլ էթտի եանի հիչ էթտի»: Պիզիւմ էօմրիւմիւլզին պաշընտա շու տուրմալը
«Պէն հիչ օլաճաղըմ», օ գէման պիզ էնէ-
պիլիւրիզ վէ հէր շէյէ րազի օլապիլիւրիզ թա
շախսի օլան հէր շէյալէն պօշալընճայատէք: 0
գէման Ալլահ քէնտի էլինի պիզիւմ իւզէրիմիզէ
գօյապիլիւր վէ պիզի հալընըզ քէնտինին ինայէ-
թինին մէտհի տէյիլ իլլա ճէլալինին մէտհի
էտէպիլիւր: Էֆ. 1. 14: Սէն քէնտին իւզէրինէ,
էնկին օլան հէր շէյ իւզէրինէ պալապլէր չալ-
մազ վէ ֆիւթիւհաթլար գազանմազ իսթէտին վէ
հէր սաաթ, վէ ճիւմլէ հալ ու քէյֆիլէթլէրտէ
ճանըն տէրունի միւվաղանէսին հըֆզ էթմէք
արզու էթտին հինէտէ ճիւմլէ ճիւտի արամանա
րաղմէն հօլու վէ զալէպէյի պուլամատըն: Նի-
չիւն չիւնքի պու ճիւմլէ շէյլէրի գահրէմանճա-
սընա սէն քէնտին էլտէ էյլէմէք իսթէտին վէ
թապիի սուրէթտէ անլէրլէ պիւր գահրէման կիպի
սէն կէօրիւնմէք իսթէտին: Լաքին էօյլէ թէճ-
րիպէի շախսիլէլէր (փորձառութիւններ) վէ չէօ-
գիւլմէքլիքլէր վար տըր քի անլէր պիւր հարպ
մէյատանընտա օլան եազմա կիպի էլտէ էտիլէ-
մէզլէր. թէճըիւպէի շախսիլէ իլէ մալիք օլունմազ
կէրէքտիլէր: Ալլահ անլէրի էօմրիւմիւլզին
հօլունուն իչիւնէ թէրթիպ էթմիշ տիւր: Լաքին
պիզ Բապպըն էլինին անլէրի գօյտուղու նօզ-
թայա գատար կիթմէլիւր, վէ 0 նօզթա հէր տէ-
ֆա օրատա պուլունուր, նէրէտէքի պիզ Ալլահըն
պէրէքէթլէրինի էօյլէ պիւր թարզտա պէքլէյիպ
ալապիլիւր պիւր մէվզիտէ պուլունալըմ քի անտէ
պիզիւմ պէնիմիզէ հիչ պիւր հիսսէ տիւշմէսին:
Պու հօլտա Ալլահըն հէր եափաղը չէօգիւլմէք-
լիք, տահա տէրին չէօգիւլմէքլիքլէրէ փէյ օլուր,
զիրա պիզի պիզտէն չըզարմասընա միւսաատէ
էթմէտիքճէ, կիւնահտան խէլաս օլմանըն միւմ-
քինի հօզ:

Բիւշիւք փէրթէվլէր քիթապընտան

Միւթէրճիւմ Ե. Պ.

ԱՃԱԻՊ ՊԻՐ ԹԵՊՏԻԼԱԹ

Սէքսէն սէնէ գատար մուգատտէմ Ալմանեա-
տա տինտար պիւր իսթիյար ճուլֆա քէնտի
տէսթկեհանընը թէրք էթտի, տէյիլքի իսթիւրա-
հաթ իչիւն, իլլա էօմրիւնին տաշամընը խէլաս-
քեարընըն խըզմէթինէ սարֆ էթմէք իչիւն:
գարար էյլէտիքի պուլունտուղոո հափալիտէքի
հէր պիւր խանէյի սէնէտէ իքի տէֆա զիյարէթ
էտէրէք Գրիստոսուն ինայէթինի տտէմլէրէ թէպ-
շիւր էյլէսին:

Պէշարէթ հօլճուլուղունտա, կիւնին պիւրին-
տէ էօյլէ պիւր էվէ կիւտի քի անըն խարիճի
կէօթէրիշի պիլէ փէք փէճմուրտա իտի, գապա

վէ ազդըն չէհրէլի վէ ճէսէտճէ զայէթ իրի պիր քիմսէ քէնտինի գարշըլատը, վէ գիյարէթինին մագիէտինի անկլատըղընտա, պիր էլիյլէ իխթի-յարը թուլթուլ օլ պիր էլիինտէ ուզոն պչազ օլտուղու հալտէ, զուտուրղան պիր թարգտա «էյէր պիր թէք սէօզ տահա սէօյլէր իսէն սէնի շու պչազ իլէ հէրէ սէրէրիմ էօմրիւմիւն հարը-սընը զաթէն մահպուտտա կէշիրտիմ պուստան սօնկրատա նէ օլուր իսէմ ֆարզ էթմէզ» տէտի:

Իխթիյար շու մուսմէլէյէ րազմէն, սաքին պիր թարգտա «էյէր Բապպ միւսաատէ էտէր իսէ քի սէն պէնի էօլտիւրէսին, գարարը եօզ լաքին պէն սանա պիր սէօզ տահա սէօյլէմէյէ մէհպուրում սէնին գայ օլմուշ ճանըլըն գուր-թուլմասընա հալա ֆուրսաթ վար Յիսուս սէնին իշիւն տախի էօլտիւ վէ էյէր քէնտինէ կէշիր իսէն ճիւմէ կիւնահլարընա րազմէն սէնի տը-շարը աթմազ» տէտի:

Էլիինտէ պչազ երեքնէլտի իսէտէ էօլտիւրիւ-ճիւ տարպէ էնմէտի, ֆազաթ իխթիյարը թու-թուլ գափուտան տըշարը աթտը:

Հաֆթալար կէշտի, իխթիյար էօլիւմէ պու գատար հաղաշմը իտիյի սօգաղա թէքրար կիրտի: Պաշընը գալտըրըպ օլ հէյպէթլու առէ-մին փէնճէրէսինէ տօղրու պագտըղընտա, մէր-գում իխթիյարը կէօրտիւ վէ անը հօգարը Հա-ղըրտը: Իխթիյար պու վէսվէսէլի տազէթէ պի-լա թէրէտտիւտ իճապէթ էթտի վէ տահա նէր-տիպանտա իքէն անը գարշըլայըպ պօյնուսա սարըլտը վէ աղլայարապ տէտի. «Ահ շիմտի պէն տախի մէսրուր իմ Յիսուս պէնի տէ գա-պուլ էտիպ կիւնահլարըմը աֆվ էթտի պուսուն իշիւն սանա միննէթտարըմ, սէն տէ սանա գար-շը էթմիշ օլտուղում պէօյիւք եարամազըղըմը աֆվ էյլէ, տախիմա տուա էթտիմ քի Ալլահ սէ-նի պիր տէֆա տահա եանըմա կէշնտէրսին»:

Օտասընա կիրտիք օտա շիմտի թէմիզ վէ նիզամը իտի: Նազլ էթտի քի օ կիւն հէր հալ-տէ քէնտինի էօլտիւրմէք նիյէթինտէ իտի լա-քին հափամատը: Օ սաաթտան իթիպարէն անըն իւզէրինէ թարիֆ օլունամայան պիր գօրգու տիւ-շէրէք ճէհէննէմին տէհէթի անըն ճանընը կիճէ վէ կիւնտիւզ իհաթէ էթմիշ իտի, իխթիյարըն սէօզլէրի անըն գալպինէ էօյլէ իշլէմիշ իտի քի ճիւմէ ճէհալէրինէ րազմէն անըն թէհէսիրինտէն գուրթուլմամտը: Օ գէման Ալլահա քէնտինէ մէրհամէթ էսուլ իսէլաա էթմէսի իշիւն ֆէրեատ էյլէտի:

Չօնուպուղուդուտա էօյրէնմիշ օլտուղու շու ալէթ գալպինէ փարլազ պիր երլտըզ կիպի տօղ-տու: «Լաքին կիւնահլըն արթտըղը եւրտէ ինա-յէթ գիյատէսիյլէ արթտը». Բօմ. 5. 20:

Վէ շիմտի պու հազիգաթը քէնտի գալպին-տէ պա թէճիւլէ պիլտիյինի սէօյլէտի:

ԿԻԻՆԱՀ ԷՕԼԻԻՄ ՏՕՂՈՒՐՈՒՐ

— 00 —

Պիր գաչ սէնէ մուգատտէմ եունանիստան-տա պիր խանէտէ կէնճ պիր գատըն հալընըզ օ-լարազ օտասընտա օթուրտըղը էսնատէ, նակեա-հէն պէօյիւճէք պիր երլան թափանտա հասըլ օլ-մուշ օլան պիր թախթանըն եարըղընտա գատը-նըն Կէման էօնիւնէ տիւշէր: Կէնճ գատընըն ֆէր-եատ ու ֆիղանընը միւթէազըպ պազը գօմշու-լար մէզքիւր խանէյէ կիրիպ երլանը էօլտիւ-րիւրէր վէ գատընը պիր ազ ուզաղա կէօթիւ-րիւպ տիւշար օլտուղը տէհէթլի գօրգուտան տօ-լայը րահաթլանտըրմաղա չալըշըլար իսէտէ, հալա գատըն՝ երլան էսփապը իշիւնտէ իմիշ տէ-յու գօրգուտան ֆէրեատընա տէվամ էտիյօր ի-տի: Էնճամ երլանըն էօլտիւրիւլտիւլիւնիւ ան-լատարապ գատընըն հէյէճանընը թէսքին էտէր-լէր: Պու վագաա իւզէրինէ սէնէլէր կէնմիշ վէ մէրգումէ տախի պիր գաչ էվլատ սահիպի օլ-մուշ իսէտէ, արասըրա՝ մէզքիւր գօրգուլու վա-գատայը տէրխաթը էյլէտիյինտէ, հալաա իւզէ-րինտէ պուզի օլան թէհէսիրի նէթիճէսի օլարազ տիլի թուլթուլ կէրէք քէնտիսի վէ կէրէք ֆամիլեանըն տիկէր ազալարը միւղթարիպ օ-լուրլար իմիշ:

Մէզքիւր երլանըն օլ խանէնին թափան ա-րասընա նէրէտէն կիրտիյի շու եօլտա թէֆսիր օլունույօր: Խանէնին րաֆը իւզնրինտէ պիր գուշ եուվասը օլուպ, մէզքիւր գուշ պաղչէլէրտէն ու-ֆազ պէօճէք վէ սօղուլճանլարը քէնտի հալրու-լարընա թաաա իշիւն կէթիրտիյի կիպի, կիւնիւն պիրինտէ զայէթ քիւշիւք պիր երլան հալրու-սընը տոալըպ եուվասընա կէթիրտի: Վէ գազա-էն երլան եուվատան գաչըպ թափան արասընա կիրմիշ, վէ իհթիմալէն պիր գաչ սէնէտէ օրատա պէսլէնէրէք էնճամ միւհիւք պիր երլան օլմուշ իտի:

Գալպի ինսանիյի պէհիրլէյէն վէ լէքէտար էտէն կիւնահ տըր: Կիւնահ միւհիւք պիր երլա-նա պէնգէր. օ էվվէլա զայէթ քիւշիւք օլարազ գալպէ կիրէր վէ էօմրիւ ինսանիյի խարապիյէ-թէ սէվզ էտէր: Իպլիս, քի պէշէրիյէթին տիւշ-մէնի տիր, անա «Գատիմ երլան» թէսմիյէ օլուն-մուշ տըր, Օ՝ կիւնահը քիւշիւք երլան հալրու-լարը կիպի գիյանըզ կէօրիւնէճէք թարգալարտա գալպէ իտիալ էտէր: Ամա կիւնահ միւրուրը գէմանլէ քէսպի ճէսամէթ էտէրէք զայէթ գօր-գունճ պիր շէքլաէ գահիր օլուպ էնճամընտա սա-հիպինէ ազիմ քէտէր վէ ֆիղանը մուճիպ օլուր:

Քիրսուտըն գանընտա կիւնահլարընտան երյ-գանըպ փագլէնմէյէն հէր պիր ինսան պիլէրէք հա պիլմէյէրէք քէնտի տէրունիյնտէ օլ միւհիւք երլանը, հանի կիւնահը կիզլէյէն վէ պէսլէյէն

պիրիսի օլուպ անըն ճանընը էօլիմէ կէօթիւ-
րիւր: Ատէմին պէսլէտիյի վէ կիզլէտիյի կիւնահ
«նիհայէթինտէ երլան կիպի սօղար վէ էնկէրէք
կիպի ըսըրըր»։ Էմս. 23. 32: «Վէ կիւնահ քէմա-
լինի պուլտուպտա, էօլիմ տօղուրուր»։ Եագ. 1.15:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿՈՉ ՄԸ, ՈՒ ԿԱՐԺԻ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ.— Հա-
լէպի կոյրերու դպրոցի տնօրէն Վեր. Սիսակ Մանուկեա-
նի ստորագրութեամբ կոչ մը ընդունեցինք, որուն մէջ
կը կարդանք թէ կառավարական զեկուցման մը համա-
ձայն՝ Սուրիոյ մէջ 4000 ի չափ կոյրեր կան: Վեր. Մա-
նուկեան քանի մը կոյրերու համար արդէն դպրոց մը
բացած է: Ասոնք դաստիարակելու նպատակաւ Անգլի-
այէն օգնութիւն կ'ընդունի, բայց շէնքի մը պէտքն ու-
նի, որու ծախքը պիտի ըլլայ 1500 հնչուն ոսկի: Այս
գործին համար Հայ բարեկամներէ 150 ոսկիի համեստ գու-
մար մը կը խնդրէ: Բանբերի ընտանիքէն անոնք որ այդ
բացը լեցնելու համար իրենց բաժինն ալ բերելու փա-
փաքը կը զգան, իրենց նուէրները կրնան խմբագրու-
թեանս միջոցաւ եւ կամ ուղղակի հասցէին ղրկել, որ է

Rev. Sisag Manougian
Protestant Church, Aleppo (Syrie)

Բարիկի Բանբերի ընթերցողներուն կը ծանուցանենք
թէ Հայ Աւետարանական եկեղեցւոյ պաշտամունքները
տեղի կ'ունենան

ա. ՇԱԲԱԹ ՕՐԵՐ ԺԱՄԸ 5 ին, 4, rue Victor Hugo
Bois Colombes.

բ. ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏԵՐԸ ԺԱՄԸ 10 ին, Սալ
Պալիսթոնի մէջ, 135, Bld. Sébastopol, Paris (2e), Մէթրօ,
Réaumur կամ St. Denis.

գ. ԿԻՐԱԿԻ ԵՐԵԿՈՆԵՐԸ ԺԱՄԸ 6,15 ին,
Պօն Փուլայէի մէջ, 3, rue Clavel, Paris (19e), Մէթրօ Buttes
Chaumont եւ Belle Ville կամ թրամվայ 26:

ՍՏԱՅԱՆՔ 307. Հայ երիտասարդաց հոգեւոր օրկա-
նին Գ. տարի Ա. թիւը, որ յետ աշուռ Լոյս պիտի տեսնէ
տպագրուած, ոչ թէ ձեռագիր: Փոքրածաւալ 16 էջնոց
եւ գեղեցիկ կողքով մը: Խմբագիրն է Մարտէյլի Ե. Բ.
Ընկերութեան անդամներէն Պր. Լիւոն Ա. Սիմոնեան:
Կ'արժէ քաջալերել զինքը: Բաժնեգին տարեկան 15 ֆր.
Ֆրանսայի եւ գաղութներու, 20 ֆր. կամ 1 տօլար ար-
տասահմանի համար:

Հասցէ Red. de Tzogh, 16, rue de la Fare, Marseille, (France)

Վեր. Գնաճեան իր հրատարակած վերջին հեղինակու-
թիւնը «Հայ Տուն» Հայ գաղթականներու համար ասկէ
յիտոյ մէկ տօլարի պիտի ղրկէ: Բոլոր անոնք որ կը փա-
փաքին «Հայ Տուն» գիրք մը ունենալ իրենց անձնական
գրադարանին մէջ, ինչ որ կ'արժէ, մէկ տօլար ներ-
փակելալ նամակով մը թող գիմեն ուղղակի հեղինակին
Rev. Knadjian, 122 Broadway, New York. N. Y. (U. S. A.)

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՒՅՈՒՄ

1. Անցեալ 2 տարիներու մէջ իրենց բաժնեգինները
չվճարողներուն՝ ասկէ քանի մը ամիս առաջ զեկու-
ցինք իրենց պարտքերը կատարել, ինչ որ շատերը ըրին,
որուն համար շնորհակալութիւն կը յայտնենք, իսկ անոնք
որ անփոյթ մնացին, ոոյն պատեհութիւնով անգամ մըն
ալ կը խնդրենք, որ թէ անցեալ տարուան եւ թէ այս
տարուան բաժնեգինները ղրկել հաճին եւ կամ երկտողով
մը հասկցնեն մեզ, որ թերթը դադարեցնենք: Մենք չենք
ուզեր մեր կողմէն դադարեցնելու սխալ քայլը առնել,
եթէ գիտնանք թէ իրենց օգտակար կ'ըլլայ:

Նոյնպէս 1928 ի իրենց բաժնեգինները չվճարողներէն
կը խնդրենք փութացնել իրենց կատարելիք բաժինը:

* *

Պիտի խնդրէինք որ մեր հասցէն որոշ ուշադրու-
թեան առնուի. ոմանք թերթիս արտօնատիրոջ անու-
նով, որ Ֆրանսացի մըն է. եւ տպարանին հասցէովը նա-
մակ կամ գրամ ղրկած են, որ մեզի հասած է: Մեր
հասցէն թերթիս առաջին էջին վրայ, բաժնեգինին ճիշդ
տակը Ֆրանսերէն գրերով գրուած է:

Մեզի անձանթ ոեւէ մէկը, եթէ յօդուած մը ղրկէ
հրատարակութեան համար, իր հեւեւոր կեանքի մասին
ալ մեզի գրելու է, ո'չ առ ի հետաքրքրութիւն կամ սո-
վորութիւն, հապա որպէս զուտ քրիստոնէական միւս-
թիւն եւ գործակցութիւն:

Անտարագիր եւ հեղինակը անձանթ գիւղիւններ
չպիտի կրնանք հրատարակել: Եթէ մէկը չփափաքի որ
իր անունը դրուի յօդուածին տակ, թող հաճի գրել մեզ,
իր փափաքը նկատի պիտի առնենք:

* *

ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՑ 1929 ի.— «Բանբեր» ի ընտանի-
քին եւ բոլոր հոգեւոր շրջանակներուն կ'ուզենք ծանու-
ցանել թէ՛ արդէն մամլոյ տակ է պատի օրացոյց մը
1929 տարուան համար:

1. Օրացոյցին խաւաքարող զարգարուած է «Կորսը-
ւած Ոչխարին» գեղարուեստական պատկերով եւ Ս. գը-
րական համարներով:

2. Ամէն օրուան համար մէկ թերթ յատկացուած է,
այդ թերթին վրայ նշանակուած է սոյն օրուան Ս. Գրոց
ընթերցանութեան տեղը եւ ոսկիդէն համար մը, որ այս
վերջինը ամբողջովին արձանագրուած է:

3. Օրացոյցին վրայ ամէն ամսուան սկիզբը գեղեցիկ
պատմութիւն մը կը գտնուի: Անիկա պատրաստուած է
մեր եղբայրներէն Արտէշ նահանգի Աւետարանիչ Տիար
Ա. Օ. Փափազեանի ձեռամբ:

Գինները պիտի ըլլան 7.50 ֆր. Ֆրանսա եւ Սուրիա,
50 սէնթ արտասահման. թղթատարութեան ծախքը մեր
վրայ:

Մէկ հատ կամ մեծաքանակ ուղղորդի թող դիմեն
հիմակուքն խմբագրութեանս կամ ուղղակի հեղինակին
հասցէին

Mr. A. O. Papazian, Pont d'Aubenas (Ardèche), France

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպգր. Ա. Երէցեան, 40, Րիւ տէ Տօմինիքէն